

ՅԵՆՐԻԿ ՄԱԼՅԱՆ

Յայ գրողների ընտանիքը հրաժեշտ է տալիս իր վաստակած, հոգնած ու մարած եղբորը: Յրաժեշտ է տալիս երախտիքի ու շնորհակալության խորին զգացումով, քանի որ Յենրիկ Մալյանը եղավ իր ժողովրդի տագնապներով ու հույսերով տրոփող հայ մշակույթի, հայ գրականության ոչ միայն զավակը, այլև ծնողը, վերածնողը, այդ մշակույթը նոր շուքով ու հանդերձով հրապարակայնացնողը:

Ամենառղբերգական, ամենաշնախատեսված, ամենաանմեղ կորուստների դեպքում անգամ մենք անողոք հարցն ենք տալիս. Երկրիս վրա ի՞նչ բողեց անցավորը: «Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը», «Սահապետը», «Կտոր մը Երկինք» և դարձյալ ուրիշ նկարներ ու գործեր, որոնք թեև լրիվ պատկերը չեն եղեռնի ու վերածննդի, քայքայման ու դիմադրության, բայց և բոլորը միասին հնարավորինս ամենալիկ պատկերն են հայ մարդու բարոյական վեհության, նկարներ՝ որոնք առանց Յենրիկ Մալյանի չեն լինելու հավատի, սիրո և վստահության ժամեր հայ ժողովրդի և աշխարհի շատ ու շատ մարդկանց կյանքում, որոնք առանց Մալյանի լինելու էին կասկածի ու անվստահության ժամեր, և վերջապես ազգային ասված մշակույթի բավական պինդ փաստեր, որոնց առջև քանահրանքը տեղի տվեց բարյացակամության, հայ ազգային կինոյի չգոյության հետ հաշտվածությունը փոխակերպվեց սպասումի, թե ինչ է նկարելու Յենրիկ Մալյանը:

Մեր լճացման ու փափուկ ճնշման տասնամյակներ մշակութային բացարձակ ամլությունից փրկվեցին մեծի նասամբ նրա անձնական շանքով: Նա, այո՛, կարողանում էր ճնշվելով չճնշվել, հանձայնելով՝ չհամաձայնել, այս ասելով ոչ ասել, «ոչ» սոցիալական, ազգային ու գաղափարախոսական ճնշման անտեսումին, նա կարողանում էր «Վերևներում» լինելով չինել «վերևներում»՝ ի վերջո դառնալով վերևիների համար ոչ անցանկալի և ներքեններիս համար ցանկալի գործիչ: ճակատագիրը մեն ու միակ նրա կյանքը խցել էր հոգևոր ամլության ժամանակներ և դաժանորեն մղում էր լավագույն դեպքում աննկատ, անանուն գոյության, իսկ նա հենց հաղթանակով ելավ, նա իր ճակատագիրը սրբագրած ելավ լուր այդ կրվից, հաստատելով խոսքը՝ թե բոլոր ռեժիմների մեջ կարելի է ու պետք է ստեղծագործել: Նա «Յենրիկ Մալյան» սիրելի անուն դարձավ, իսկ աշխարհագրական վայրը մեծագիր Յայրենից՝ անուններն են դարձնում:

Բազմիցս է կրկնվել գրողի և բեմադրիչի գործակցությունը, և

գրեթե նույնքան բազմիցս է այդ գործակցությունը վերաճել անհաշտ հակառակության. բաց ու բարձր գլուխագործոցներ չեն զորել ապիկարներին հասցնել իրենց երկինքներին և հակառակ՝ ապիկարները գլուխագործոցներ են տապալել: Մեր գրականության փառահեղ կոթողներից Մայանը փառք ու անուն չաղերսեց, Մայանն արժեք ու անուն տվեց գործերի, որոնք առանց իր մատնացույցի նվազ նշմարելի էին լինելու: Յայ գրողների անունից ահա թե ինչու ենք ասում շնորհակալությամբ. նա ոչ միայն հայ գրի, հայոց բանի որդին, այլև ծնողը եղավ:

Անկատար մնաց նրա օրհասական ճիզը՝ Կոմիտասի, հայոց մեծ զարթոնքի ու կործանման պատմությունը: Սոսկական իլջ մնաց նաև հայրենի եզերքից վտարվածների կարոտի պատկերը, կարոտ՝ որ մարմնական ցավ է դարնում ու ցնորում մարդու: Այդ պատկերները չափսի կայանային և չկայացան: Եղեռնը դժոխք է, բազմագլուխ իրեշ, որ չի թողնում մոտենալ, թունավոր բոցերով դեռ հեռվից է խելագարեցնում ու ոչնչացնում ամեն մի հայ մարդու, առավել ևս՝ արվեստագետի: Այդ գործերի չիրականացումը փաստն է նաև հանդուգն հոգու հետ գնալուց մարմնի բնագդային, ինաստուն հրաժարման: Յենրիկի մարմինը հրաժարվեց, ընկրկեց, մնաց - բայց ոչ երբեք ի խրատ դեռ ողջերիս և սերունդների ու սերունդների: